« ձի կայ՝ որ մարդ որ վրան հեծած լինի՝
« չի շուր և չի աղբեր. ձի կայ՝ որ մարդ
« չի հեծցներ ի վրան, քան իւր տիրոջմէն
« ի զատ։ Չի կայ՝ որ մարդն ջանայ սպա-
« նանել. ձի կայ որ տիրոջն խնամող է,
« զինքն ի մահ կու տայ և զտէրն կու պահէ։
« Գրեմք զխասլիաթն (օգուտ) Ձիուն։
« Աստուն՝ փոքր տղայոց վիդն կապեն, ակռան
« չի ցաւի, և առողջ մնայ։ Թէ մարդն խոպիլ-
« նիկն կոխէ, ձիուն ատաուն զլխուն տակն
« դնէ, ծանրութիւն չի կոխէ զինքն։ Թէ
« տունն մժեժիս լինի՝ որ է սիվրի սիանկ,
« զրան վրայ երկու երեք մազն կախեն,
« մժեժիս չմտանէ ի տունն. Թէ ձիուն ջուր
« խմած տաշտէն՝ հաւուն ձագերն ջուր խմեն,
« ճայեկն գնա չի առնու։ — Թէ կինն զի-
« ժարնայ և հանգստութեամբ չի կարէ բերել
« զտղայն, ձիուն չոր աղբն ծխեն, հանգստու-
« թեամբ ծնանի։

« Գիտենալ պիտի որ Աստուած մարդուն
« ի զատ աղվոր իրք չի ստեղծ. յառաջ
« զձին ստեղծ վասն մարդոյն և ապա զմարդն։
« — Ձին քան զամենայն անասուն երագ-
« ընթաց է և պատերազմող. ապա ձիուն
« տէրն՝ ով որ հեծնի՝ նա է։ Կինն ով որ
« մերձաւորի՝ տէրն նա է, Թուրն՝ ով որ
« մէջքն կապէ և ի ձեռն առնու, (տէրն) նա
« է. զի այս երեք իրքն, ձի և կին և Թուր՝
« վեֆաչի (իրաւացի տէր) ունին. ապա ձին
« զտէրն կու խնամէ ի ժամ պատերազմին,
« և քանի կարող է՝ պատերազմի հետ Թշնա-
« մոյն. մինչեւ ի մահ զքեզ կու խնամէ՝
« որ չի ընկնիս. և Թէ ընկնիս, կայ ձի՝ որ
« կանգնի ինքն մինչեւ տէրն հեծնու, և
« խնամէ զքեզ։ Մարդ՝ որ ի ժամ պատե-
« բազմին՝ զտէրն և զընկերն չի խնամէ,
« քան զձինն այլ անասուն է և անպէտ»։

Ծանօթ պիտանի կենդանեաց պէսպէս օգուտներն յիշելով Աբրահամ՝ երբեմն բա-
բոյական խրատներ այլ խառնէ. նշանաւոր է Եզին ստորագրութեան աւելցուցածը ի լուս-
անցս, իր ազգայնոց բնաւորութեան համար. Եզն՝ « Ադամայ որդուն շահ շատ ունի,
« վաստակաւոր է . . . զի զհողն ինքն կու
« հրդէ (հարթել). և այլ անասունքն անչափ
« չեն կարեր վաստակել որպէս եզն։ Դար-
« ձեալ, սուրբ է և մատաղ լինի, վասն ան-
« չափ խոնարհութեանն։ Դարձեալ, անչափ
« ուժ ունի, որ տասն ապուծ թէ ի վերան
« դան՝ կարէ հետ տասնին պատերազմել —
« (տես ի ստորագրութեան ապուծուն)։...
« Ասեն տաճկաց առասպելեացն՝ վասն ան-
« չափ ուժուն. Աստուած՝ աշխարհս եղան
« մի վրայ ստեղծ, և կայ այդպէս մինչեւ
« յաւիտեան Աստուծոյ հրամանն. ապա սուտ
« է։ Տես զկապաշարքն. մեղայ Աստուծոյ.
« որ եզն Աստուած կու պաշտեն, վասն
« անչափ յուժոյն և խոնարհութեան նորա.
« զեռ կայ մինչեւ ցայժմ ի Հընտբստան, ի
« կղզին որ Կոմայ ասեն, եզն կու պաշտեն.
« նոցա՝ ֆարսի բառով Կաշբերեռ ասեն.
« ամենեին նոքա միս չեն ուտեր, ոչ
« չորքոտանեաց և ոչ թռչնոց. և թէ մարդս
« նոցա մօտն՝ չորքոտանի կամ թէ թռչուն
« զենէ՝ սուգ մտանեն, թէ անխնամ բան գոր-
« ծեց». Ուրիշ տեղ մ՚այլ գրէ. « Եզն որ ի
« Հընդբստան կու լինի՝ մկընդուն, և եղջիւրն
« որպէս այծու ի կոնակն կու հասանի. և
« ինքն նման է եղանն։ Զայն մենք տեսանք
« որ բերին ի Ստամպօլ. այն եզն է որ կու
« զարդարեն և կու պաշտեն կռապաշտք,
« որպէս թէ արարիչ կարծեն զնա անմիտքն,
« և բեռն բառնան ի վերան որպէս զձի։ —
« Եզ մի այլ կու լինի ի Հընդկաց աշխարհն,
« ազին երկայն և ձիոց վրզէն կախ անեն,
« և հոբազ (վրզնոց) կու ասեն...» և այլն։
— Լսենք հիմայ խրատը։

« Տես, ով մարդ որ եզն վաստակաւոր
« չլինի, մրթեն և զմիսն ուտեն. որչափ
« մարդս որ վաստակաւոր չլինի, ուլ (յոյլ)
« և ծուլ լինի՝ սպանանել պարտ է։ Զազգն
« Հայոց՝ վասն էր կու ընդունին այլ ազգ
« մարդիկ։ — Վասն այն՝ զի վաստակաւոր
« են. ապա մեծասիրտք են և կոպիտք։
« Եզան կու նմանցընեն զազգն Հայոց՝ վասն
« բազում յոյժոյն »։ Անշուշտ այդ կոպտու-
թիւնն այլ գովանի յատկութիւն մի ունէր՝
մեր հեղինակին խմացմամբ։

Խոզի ստորագրութեան մէջ՝ աւանդու-
թեամբ կ՚ըսէ. « Խոզն կիսասուրբ է. և քրիս-
« տոնէիցն՝ առաքեալքն հրամայեցին ուտել,